ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/61-2374 «11» 02 2020 թ.

«ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
ք. Երևան, Գյուլիքեխվյան փող., շենք 7, բն.11

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 18.09.2019 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ֆոտովոլտային համակարգերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:»

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 46-րդ օրացուցային օրը ներառյալ:

Աշխատանքների սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառով ընկերության հետ կնքվել է համաձայնագիր և աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է ևս 30 օրացուցային օրով, որի գործողության ժամկետն ավարտվել է 2019 թվականի դեկտեմբերի 3-ին:

Ընկերության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 30-ին ներկայացվել է պայմանագրով նախատեսված թվով 18 շենքերի ֆոտովոլտային համակարգերի նախագծային փաստաթղթերի մեկ օրինակ /պայմանագրով նախատեսվել է 5 օրինակ/, որոնք չեն համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներին:

Նախագծային փաստաթղթերի տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելու վերաբերյալ ընկերությանը տրվել է բանավոր պարզաբանում, ինչպես նաև 2020 թվականի հունվարի 14-ին այդ մասին տեղեկացվել է թիվ 45/129935h գրությամբ:

Միաժամանակ՝ ընկերությանն աշխատանքային կարգով, էլեկտրոնային փոստով տրամադրվել է տեղեկատվություն նախագծերում տեղ գտած անհամապատասխանությունների վերաբերյալ, որոնք ընկերությունը հավաստիացրել է շտկել մինչև 30.01.2020 թվականը:

Սակայն 2020 թվականի փետրվարի 5-ի դրությամբ ընկերությունը որևէ նախագծային շտկումներ չի իրականացրել և պայմանագրի արդյունքը չի ներկայացրել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129